

նին կ'ընդունի խանձարրապատ Յիսուս մանուկը Ս. Կոյսէն, աջ կողմը կը գտնուէր նաև անձ մը՝ որուն գլուխին շուրջը լուսապսակ մը կար, և կը թուէր ըլլալ Ս. Յովսէփ: Միևնոյն տեսարանը գծուած էր միանարէին մէջ դրուած երեք խոյակներուն վրայ, բայց երկուքը կոտրուած էին մեծ չափով: Ոչ միայն խոյակները, այլ նաև սիւները և խարխիւնները որ զանոնք կը կրեն, եզական ամբողջութիւն մը կը կազմեն: Այս կտրուած խոյակները զետեղուած էին երկու պատերու միջև գտնուած ուղիղ անկեան մէջ: Ուրեմն դիւրին կ'ըլլայ գուշակել թէ անոնք որ տեղէն բերուած էին: Փոկաս՝ Խաչակիրներու Templum Domini (sakhra) նկարագրած ժամանակ, կ'ըսէ թէ, ներքին կողմը, նկուղին կամ այրին հակառակ կողմը, երկու փոքր մատուռներ կամ սենեակներ կային, որոնցմէ մէկուն մէջ ներկայացուած էր «Փրկչին գալուստը, որուն համար Սիմէոն Մերուսին իր բազուկներուն վրայ կ'ընդունէր զՅիսուս», եւ միւսին մէջ՝ Յակոբի տեսիլը: Խիստ հաւանական է որ այս երկու խոյակներու կտորները այն մատուռներէն առնուած են Սալատատինի կողմէ՝ Էօմէրի մզկիթին նորոգութեան ժամանակ: Սիմէոնի հագած քահանայական զգեստը շատ հետաքրքրական չէ (P. E. F. 1874, էջ 269):

Գ. ՍԻՈՆԻ ԼՆՌԸ

Յովսէպոս կը վկայէ թէ Յերուսաղիներուն քաղաքը կամ Սիոնի բերդը կը բարձրանար Երուսաղէմի